ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

ԱՐՏԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի ապրիլի 14-ից մինչև 2023 թվականի հուլիսի 13-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ժողովրդագրության և ընտանիքի սոցիալական երաշխիքների վարչության ինտեգրված սոցիալական ծառայություններ բաժնի փորձագետ Հասմիկ Վեզիրյանի՝ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերաբերյալ.

- պատրաստել եմ քաղաքացիների դիմումների, այդ թվում առցանց ստացված դիմումների, ինչպես նաև ՀՀ վարչապետի, ՀՀ նախագահի աշխատակազմերից և այլ մարմիններից ՀՀ ԱՍՀՆ վերահասցեագրված քաղաքացիների դիմումների պատասխանները և ապահովել դրանց համապատասխան ընթացքը,
- պատրաստել եմ մի շարք պաշտոնական գրությունների նախագծեր՝ նախարարություններ, գերատեսչություններ և կազմակերպություններ ներկայացնելու համար, ինչպես նաև ՀՀ վարչապետի աշխատակազմից ստացված հանձնարարականների, այլ պետական և ոչ պետական մարմիններից ստացված գրությունների պատասխանների նախագծեր,

- պատրաստել եմ ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման N 1 Հավելվածի 8-րդ կետի հաշվետվությունները,
- մշակել և պաշտոնական շրջանառության մեջ եմ դրել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1924-Լ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 2082-Լ որոշումներում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի նոյեմբերի 17-ի N 1773-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին», «Կացարանի կարիք ունեցող ընտանիքների կողմից բնակարանի կամ բնակելի տան ձեռքբերմանը պետական աջակցություն տրամադրելու նպատակային ծրագիրը հաստատելու մասին», «2022 թվականի դեկտեմբերի 12-ից Լաչինի միջանցքի արգելափակման հետևանքով Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի բնակիչների ժամանակավոր հյուրընկալող կացության կազմակերպման ծառայություններ իրականացնող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի ծախսերի փոխհատուցման սոցիալական աջակցության տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերը,
- մասնակցել եմ Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի բարեփոխման ռազմավարության և միասնական սոցիալական ծառայության զարգացման հնգամյա գործողությունների ծրագրի մշակման գործընթացին,
- իրականացրել եմ Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1924-Լ որոշման շրջանակներում

քաղաքացիներից ստացված դիմումների ուսումնասիրություն և ապահովել դրանց համապատասխան ընթացքը,

- վարչության պետի հանձնարարությամբ կազմել եմ գրություններ, տեղեկանքներ և այլ փաստաթղթեր,
- վարչության պետի հանձնարարությամբ կատարել եմ բաժնի գործառույթներից բխող այլ աշխատանքներ:

**ԻՆՏԵԳՐՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱԺՆԻ ՓՈՐՁԱԳԵՏ** **ՀԱՍՄԻԿ ՎԵԶԻՐՅԱՆ**

Կատարված աշխատանքը [illegible]
գնահատում եմ դրական:
Ա. Հարությունյան